հանուր խնամատարութեան կանոնները ես քաղեւ եմ նոյն գրքից, բայց եթէ այնտեղ ես ցոյց չեմ տուած թէ ինչ ազդիւրից են քաղած իմ տեղեկութիւնները, այդ մի պատճառական բան էր և ոչ թէ այդպիսով ես կամեցել եմ ինձ սեփականացնել այլոց աշխատութիւնը, մանաւանդ որ ես արդէն գիւղատնտեսութեան վերաբերեալ առաջին յօդուածոյս յայտնած էի, որ իմ յօդուածների տեղեկութիւնները քաղած կը լինեն զանազան աղբիւրներից.»

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԹԻՒՐՔԻԱ

—

Կ. Պոլսում հրատարակվող «Վաքիթ» թիւրքաց լրագիրը լսել է, որ Կ. Պոլսի Եւրոպական դեսպանները յանձնեցին անգլիական դեսպան Գոշէնին և Ֆրանսիական դեսպան Տիսոնին յօրինել Եւրոպական պետութիւնների կողմից Բ. Դրան տրվելու պատասխանը Հայաստանի մէջ մացնելու բարենորոգումների վերաբերութեամբ:

Կ. Պոլսից «Polit. Corresp» լրագրին գրում են հետեւեալը:

Բ. Դրան պատասխանը պետութիւնների գրութեանը անխոսկած բաւականացուցիչ չի համարվի: Կարելի է հաստատ ասել, որ դեսպաններից շատերը ուրախ են պատասխանի չափաւոր լինելու առիթով, որովհետեւ կարող են նոր բանակցութիւններ սկսվել և այդպիսով կը պահպանվի խաղաղութիւնը թէ Եւրոպայի և թէ Արեւելքի մէջ: Եթէ Թիւրքիայի մէջ կայ հասարակական կարծիք, նա պաշտպանում է Թիւրքաց կառավարութեան բռնած ընթացքը: «Վակիթ» լրագիրը յարձակվում է Եւրոպայի վրայ, իսկ «Թէրջիմանիւ-Հակիկաթ» լրագիրը անարգում է Եւրոպայի անիրաւութիւնը: Այս վերջինը յայտնում է, որ մեր հմուտ գրողներին միայն այժմ կարելի կը լինի ստիպել, որ նրանք թողնեն իրանց գրուած երկիրը և որ Թիւրքիան պատրաստ է մեռնել, քան թէ խոնարհվել Եւրոպայի վրայ: Ոչ սուլթանը և ոչ նրա կառավարութիւնը ընդունակ չեն մինչև այդ ասութիւնի թոյլ լինելու և ամբողջ մահմեդական աշխարհը պատրաստ է պաշտպանել քաջ այրանցիների ընդդիմադրութիւնը: ունայն Հարցի վերաբերութեամբ ընդհանուր կարծիքը այն է, որ կարելի կը լինի խաղաղութիւնը պահպանել, եթէ յոյները չեն յարձակվի այրանցիների վրա և եթէ այս վերջինները կը կարողանան զսպել իրանց պատերազմական եռանդը: Տարաբաղդաբար այրանցիները չափազանց անհամբեր են: Հաւատացնում են, որ վերջին օրերում այրանական առաջնորդները բաց հեռագրերներ են ուղարկել սուլթանին և Արեւգոնիս-փաշային, որոնցով նրանք յայտնում են, թէ մտադիր են թշնամական զորձ գործութիւններ սկսել Ցունաստանի դէմ և Թիւրքաց կառավարութեան հրամանին են սպասում: Օրերում պատահի մէջ Ցաղայով այրանցիները մօտ 550 մարդ առանձին առանձին կանչվեցան պատահի սենեակներից մէկը, որտեղ սուլթանի ադիւտանտը յայտնեց նրանց այրանական լեռուով, որ նրանք հայրենիք ուղեւորվին, որովհետեւ իրաւի յոյները շուտով կը յարձակվին այրանցիների վրա: Նրանց պատասխանութիւնն է պաշտպանել Այրանիայի ամբողջութիւնը և սուլթանի իշխանութիւնը: Սուլթանի հրամանով նրանցից իւրաքանչիւրին տրվեցաւ նոր զգեստ, Հնդրի-Մաքսիմի հրացան, հեծելազօրքի բէվոլվեր և թիւրքաց չորս լիրա: Բացի այդ այրանցիները կուղեւորվին հայրենիք կառավարութեան հաշուով: Այրանցիները չափազանց ուրախ էին և յուլիսի 23-ին սկսեցին նրանց խումբերով ուղարկել, իսկ այսօր յուլիսի 30-ին ուղեւորվում են վերջին հարիւր այրանցիները: Բացի այդ հաւատացնում են, որ այրանական առաջնորդները սպառնալիքներով պահանջում են սուլթանից իրանց երկրին անկախութիւն և ինքնավարութիւն տալ մեծ արտօնութիւններով:

ԱՒՍՏՐՕ-ՈՒՆԳԱՐԻԱ

—

Երբ պետութիւնները համաձայնեցին Ցունական ցոյց կատարել Թիւրքաց ջրերի մէջ, առաջարկութիւն եղաւ չը բաւականանալ միայն նաւեր ուղարկելով Բօսֆորի ափերը, այլ զինուորական նաւերի վրա բաւականաչափ զօրքեր ունենալ, որպէս զի այդ զօրքերը հարկաւոր դէպքում կարողանային օգնութիւն հասցնել յունական և չերնոգորիական զօրքերին, երբ նրանցից առաջինները կը սկսեին գրաւել այն նահանգները, որոնց Բերլինի կոնգրեսներնցիան տուել է Ցունաստանին, իսկ երկրորդները կը սկսեին գրաւել Դուլցինիոյ: Ցայտնի է, որ աւստրո-ունգարական կառավարութիւնը ընդդէմ էր միացեալ նաւատորմի վրա զօրքեր ունենալու մտքին: Այժմ լրագիրներին հաղորդում են, որ աւստրիական «Pester Lloyd» լրագրի մէջ մի կիսապաշտօնական յօդուած է տպվել, որ հաւատացնում է, թէ կառավարական շրջաններում յաղթող է հանդիսանում Ցունական ցոյցի անբաւականացուցիչ լինելու միտքը: Ցունական ցոյցը, լրագրի կարծիքով, բաւական չի լինի պետութիւնների միացեալ զործունէութեան համար Բ. Դրան վերաբերութեամբ: Լրագիրը չէ կասկածում, որ Թիւրքաց կառավարութեան բռնած դիրքը կը ստիպի պետութիւններին աւելի էլ պնդել, կամ իրանց հեղինակութիւնը պահպանելու համար աւելի մեծագոյան միջոցներ գործադրել, քան թէ Ցունական ցոյցը: Լրագիրը աւելացնում է, որ Ցունաստանը և Չերնոգորիան համաձայն կարող են յոյս ունենալ, որ նրանց ցանկութիւնները կը կատարվին:

Վիէննայից լրագիրներին գրում են, որ Ֆրանսիայից արտաքսված եղուխները արժանացրին իրանց ուշադրութեան Գալիցիան, մանաւանդ Կրակով և Տարնով քաղաքները: Առժամանակ նրանք վանքերի և մասնաւոր տների մէջ են բնակվում, բայց արդէն սուն և կալուածներ են գնել, այնպէս որ Կրակով քաղաքը, այդ «երկրորդ Հռոմը», կարող է շատ լաւ ապաստանարան լինել գժբաղդ աքսորականների համար:

Մի քանի օր սրանից առաջ լուր տարածվեցաւ, իբր թէ աւստրիական կայսր Ֆրանց-Յոսէփը հիւանդ է, այնպէս որ գերմանական լրագիրները ենթադրում էին թէ կայսրը Գալիցիա չի ճանապարհորդի: Այս լուրը պաշտօնապէս հերքվեցաւ: Վաղ թէ ուշ կայսրը կայցելի Գալիցիա, որտեղ պատասխանութիւններ են տեսնվում նրան հանդիսաւոր կերպով ընդունելու համար: «Allgemeine Zeitung» լրագիրը իրաւացի կերպով խորհուրդ է տալիս լեհացիներին չը չափազանցնել իրանց ցոյցերը: Առհասարակ աւստրիական լեհացիները պէտք է բաւական լինեն իրանց գրութենից. իրանց քաղաքական ընդունելութեան շնորհիւ նրանք աւստրիական բոլոր սլաւներից աւելի մեծ ազատութիւն և անկախութիւն են վայելում:

ՖՐԱՆՍԻԱ

—

Փարիզից «Polit. Corresp.» լրագրի դիպլոմատիական թղթակիցը գրում է հետեւեալը յուլիսի 31-ից:

Ֆրանսիական կառավարութեան իսկական քաղաքականութեան մասին այնքան շատ սխալ լուրեր են տարածվում, որ աւելորդ չի լինի շշդուեմամբ նրան որոշել: Ընդդիմադրական կուսակցութեան և մինչև անգամ մի քանի այլ լրագիրները, յայտնի չէ ինչ հիման վրա, երկիւղ են կրում, որ Ֆրանսիան գործնականապէս կը մասնակցի արեւելեան հարցի վճռելուն: Իսկապէս Ֆրանսիան ոչ իրաւունք ունի և ոչ պարտաւոր է առանց Եւրոպայի օգնութեան միայնակ սկսել յունական հարցի վճռելը: Թէպէտ կոնգրեսներնցիան ընդունեց Ֆլրանսիայի առաջարկած սահմանագիծը, բայց պէտք չէ մոռանալ, որ կոնգրեսներնցիան Անգլիայից առաջարկվեցաւ, որ կոնգրեսներնցիային Գերմանիան էր նախագահում, որ նա Բերլինի կոնգրեսի և դաշնագրի հեղինակը էր և վերջապէս բոլոր պետութիւններից աւելի մեծ ազդեցութիւն արեւելեան գործերի վրա Գերմանիան ունեցաւ: Ֆրանսիան Ցունաստանի մէջ առանձին շահեր չունի, նրա գործողութիւնները առաջնորդվում են ընդհանուր հաւասարակշռութեան և քաղաքական կրթութեան գաղափարներով: Այս պատճառով Ֆրանսիան չէ կարող զործել ոչ Գերմանիայի և ոչ Աւստրո-Ունգարիայի օգտին: Նա կամենում է միայն չափաւոր և Եւրոպայի հետ համաձայն գործել: Ֆրանսիայի մէջ այդ հարցի վրա ամենքը միատեսակ են նայում: բոլոր կուսակցութիւնները ընդդէմ են զինուորված ձնշմանը, որ պատերազմի ահեղ կը դառնար: Դարձի վրա այսպէս են նայում և կառավարական անձինք: Մի և նոյն ժամանակ Ֆրանսիան ազգային ժողովները այժմ նիստեր չունեն և ապրիլ չը կայ ենթադրելու, որ նրանք շուտով կը հրաւիրվեն, իսկ առանց ազգային ժողովների գիտութեան նշանաւոր վճիռ երբէք չի տրվի: Նորհրատ Ֆրանսիական կառավարութիւնը խորհուրդ տուեց Ցունաստանին չափաւորութեամբ զործել: Գէորգ թագաւորը հետեւեց այդ խորհուրդներին և Ցունաստանի պատրաստութիւնները երկրի պաշտպանութեան համար են կատարվում: Մինչև անգամ Ֆրանսիական զեներալ Տօմասենի Ցունաստան ուղարկելը յետաձգված է: Ուրեմն կարելի է հաւատացած լինել, որ Ֆրանսիական կառավարութեան քաղաքականութիւնը ձգտում է խաղաղութիւնը պահպանել:

ՆԱՄԱԿ ԹԻՒՐՔԻԱՅԻՑ

—

Կ. Պոլիս, 30 յուլիս

Երէկ և այսօր յուլեալ օրեր են Կ. Պոլսոյ հայոց համար: Յուլիսի 28-ին լուր տարածուեցաւ թէ Հայաստանի վերաբերեալ կարեւոր հեռագրեր կառավարութիւնը վար դրեր է. ահա երէկ կիմանանք. «Stamboul» կը հրատարակէ, «Անվաճառ» և «վագթ» կը հաստատեն թէ «յանուն ազգային վրէժխնդրութեան հայոց գինեալ զօրեղ խմբեր յարձակեր են վաստակաբանի քիւրդ գիւղերս վրա և 7 գիւղ ապրեր մրրկեր են:»—Այս լուրը որոյ ստուգութիւնը մինչ աստիճան լինելն չը կարողացանք իմանալ, մեծ ազդեցութիւն ունեցաւ: Համոզում կայ որ եթէ այս դէպքը ճշմարիտ լինի, Եւրոպայի վրա խոր տպաւորութիւն մը պիտի ընէ և հայկական խնդրոյն այնպիսի քայլ մը անել տայ պիտի, յորմէ յետ և յետ զոհ պիտի լինենք: Այսօր Պարտիարքը դեսպանոց այցելութեան պիտի չրջապտի: Վաղը դեսպանք նիստ ունին հայոց խնդրոյն համար. տակաւին Հայաստանի վարչական ծրագիրն չեն աւարտած և գաղտնի նիստի մէջ այս հարցը պիտի կարգադրեն: Արքազանը չրջաբերական մը պատրաստեց, զոր այս երեկոյ պիտի խրկէ բոլոր դեսպանաց. վանեցոց առ Ազգ. Ընդ. ժողովն մասուցած բողոքագրին պիտի խրկէ միասին, հանդերձ կարեւոր բացատրութեամբ առ դեսպանս: Վերջապէս հայոց խնդրին որ օրեցս երկրորդական կերպարանք մը առած էր յունաց և Մոնթենեկրոյի հարցերու բաղդատմամբ, երկու աւուրց մէջ կերպարանափոխ եղաւ, հայոց գինեալ խմբերու արշաւանաց լրոյն չնորհիւ. կրնան որ այս միջոցին վանայ մէջ ալ շարժում մը տեղի ալիսի ունենայ: Այն ատեն իրաց վիճակը անհաղորդելի կերպով կը լաւանայ: Երէկ ասիական թղթատարը եկաւ, բայց վանի հանմանեներն չը յանձնուեցան մեզ:—Մենք կը սպասենք ստոյգ և մանրամասն տեղեկութիւններ:

Ազգ. ժողովը զուարեցաւ. կը զբաղի վարչական ծրագրի խնդրով. կերեի թէ չատ հակառակ են պաշտօնէից զրուվիւնը ընդունելու. այսինքն ազգ. արտաքին յարաբերութեանց, ներքին յարաբերութեանց, վանական, ուսումնական, երկրագործական գործոց տեսուչներ ընտրել, օրք պիտի կազմին ազգ. վարչութիւնը իւրաքանչիւրը պատասխանատու առ ազգ. ժողովն, միանգամայն ամբողջ վարչութիւնը պատասխանատու: Ազգ. ժողովը ներկայ տարւոյս մէջ կերեի թէ աւելի օգնորեալ պիտի գործէ. «Հայրենիք» լրագիրը որ չաքաթաթերթ էր օգոստոս 1-էն սկսեալ օրական պիտի լինի. և կարծեմ թէ ազգ. ժողովոյ ընդդիմադիր մասին, այսինքն Պատրիարքի և վարչութեան գործոց հսկող և համար պահանջող մասին թերթը պիտի լինի.

Զէրեզեաց Զէյթունի մերձակայները Ա՛մէլիք գիւղի վրա յարձակելով, աւերեր կողոպտեր էին, եկեղեցին մզկիթի փոխած էին, Պատրիարքը բողոքեց ում անկ է, դեռ գոհացուցիչ պատասխան չընդունեցաւ.

Աւստրիոյ կայսրը 1000 ֆեօրին նուիրեց Հայաստանի սովկոց համար մեր կենդրոնական ժողովին. Նուպար քաչայի՝ նախանձուռիթամբ Եգիպտոսի մէջ մանաւանդով մը կը կազմվի և 800 ոսկի կը հաւաքվի և կը խրկեն մեր մանաւանդովին. Պ. Լօսոն ուրիշ նամակ մը մեծ ցաւ կը յայտնէ հայոց զէմ բերէն սպրված խօսքին համար.—Թէ օգուտ, ինդրոյն էն տաք մէջոցին բերնէն՝ խօսքը չը գիտեաս: Այս օրերս «Թարմզիս» մը նամակ պիտի խրկուի պ. Հանիի կողմէ (Stamboul»-ի անգդիացի անթղթը), որ պիտի հաստատէ թէ ինչպէս հայերն պատճառ եղան Անգդիացոց Հեղինատան հաստատուելուն:

Հայկակ

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՆՉԱՎԱՅԱՑԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆՆԻՑ

ԼՕՆԴՈՆ, 5 օգոստոսի: Համայնքների ժողովի մէջ մարիկ Հարրինգտոն յայտնեց, որ Հնդկաստանի բիւդժեսի մէջ 7005000 ֆունտ ստերլինգ պակասորդ կայ, այս տարի այդ պակասորդից 3,500,000 կը ծածկվի: Հարտինգտոն յոյս ունի, որ Աֆղանիստանի պատերազմի համար ուրիշ ծախսեր չեն հարկաւորվի:

ՓԱՐԻԶ 4 օգոստոսի: «République Française» լրագիրը յայտնում է, որ «Virité» լրագրի հրատարակած նամակը վերաբերվում է 1871 թուականի հոկտեմբերի 16-ին և բոլոր լրագիրների մէջ տպված էր:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 5 օգոստոսի: Լիզովկայի մէջ պատահած երկիվզ հրդեհը ոչնչացրել է 22 տուն: Վնասները միլիոնաւոր են: Այրվեցին 18 ձիաներ, երկու կով: Մի փոքր աղջիկ կորաւ:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 6 օգոստոսի: Պետական բանկի 5% առաջին առաջին շրջանի արժէք 93 ր. 50 կ., երկրորդ 92 ր., երրորդ 93 ր. 50 կ., չորրորդ 92 ր. 50 կ., ներքին 5% առաջին փոխառութեան տոմսակը արժէ 224 ր. 25 կ., երկրորդ 223 ր. 25 կ., արեւելեան առաջին փոխառութեան տոմսակը արժէ 91 ր. 37 կ., երկրորդ 91 ր., երրորդ 91 ր. 12 կ., ոսկի 7 ր. 85 կ.: Ռուսաց 1 բուրլ Լօնդոնի վրա արժէ 25,09 պէնս, ռուսաց 100 ր., Բերլինի վրա 227 մարկ, Համբուրգի վրա 214 մարկ 37 պֆ., Փարիզի վրա 264 ֆր. 25 սանտիմ: Բօրսայի տրամադրութիւնը հանգիստ է:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 7 օգոստոսի: Պաշտօնապէս հաղորդվում է որ կոմս Լօրիս-Մելիքովը նշանակված է ներքին գործերի մինիստր, իսկ Զերէվին նրա օգնական: Փանդարմերիի զօրաբաժնի կառավարութիւնը յանձնված է ներքին գործերի մինիստրին:

Կ. ՊՕԼԻՍ, 7 օգոստոսի: Պալիցիայի մինիստրը Հաֆիզ-փաշան հրաժարեցաւ է իր պաշտօնից մոլեանդ գործունէութեան եղանակի պատճառով: Նրա տեղը նշանակված է Գազի-Հաֆիզ-փաշան:

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ